Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 882 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կանոնակարգվում է 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին օրենքով սահմանված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն տրամադրման կարգը:

2. Տվյալ հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչությունը մինչև հուլիսի 10-ը գույքագրում է՝

1) այն կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություններ), որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ, հայտարարագիր և չունեն հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ.

2) այն կազմակերպություններին, որոնք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ.

3) այն կազմակերպություններին (հարկային տեսչության տրամադրության տակ առկա լինելու դեպքում), որոնց հիմնադիր կազմակերպությունները լուծարված են:

3. Գույքագրման ավարտից հետո համապատասխան հարկ վճարողների ցանկերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ցանկերն ամփոփում և էլեկտրոնային եղանակով մինչև հուլիսի 15-ը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր):

5. Պետական ռեգիստրին տրամադրվող ցանկերը պետք է պարունակեն կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հաշվառման հարկային տեսչության անվանումը, պետական գրանցման համարը և ամսաթիվը, կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), հարկային մարմնին հայտնի կամ պետական ռեգիստրում նշված կազմակերպության գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ բնակության հասցեն), հարկ վճարողի հաշվառման համարը:

6. <<2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ժամկետում պետական ռեգիստրի կողմից լուծարված (պետա-

կան հաշվառումից հանված) կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) մասին հարկային մարմնին տրամադրված տեղեկատվությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինն այն պետք է տեղադրի իր պաշտոնական կայքում:

7. Սույն կարգով սահմանված գործընթացի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն լուծարված (պետական հաշվառումից հանված) կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) մասին հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ